

Նախապատիւ հանուրց պաշտօնէից եւ Պարոնայց արքունեաց Սիսունայ, որպէս եւ արժանն պահանջէր, լինէր **Պայլն**. (Bayulus, Bailli, Bailo), 'ի ժամանակի պարապոյ արքունի աթոռոյ, կամ անտիական հասակի թագաւորին, որ եւ *Թագաւորահայր* կոչէր երբեմն. եւ էր ընդհանուր յանձանձիչ եւ վարիչ տէրութեան, իբրեւ երեսփոխան¹¹⁰ թագաւորին կամ դաստիարակ նորին. վասն որոյ եւ Կառավարիչ անուանի երբեմն (Gubernator). եւ ըստ այսմ երեւին եւ առ լիահասակ թագաւորօք կացեալ Պայլք, որպէս յիշէ եւ մերս Լեւոն, յամի 1214 'ի Պարգեւագրին առ Հիւրընկալս, եւ ոչ մի՝ այլ յոգնակի, (meorum Bajulorum). եւ յայտնապէս 'ի մահուանն՝ Պայլ եւ խնամակալ ժառանգի իւրում՝ դեռաբոյս դստերն Զապելի՝ կարգեաց *զՍիր Ատան*, զնախապատիւն պարոնայց իւրոց, եւ երկրորդ՝ զգունդստապլն *Կոստանդին* զիւր քեռոյ որդին, որ եւ յետ վաղաժամ սպանման Ատանայ՝ եղեւ առաջին Պայլ, եւ յատկագոյն եղեւ նմա այս կոչումն քան զայլս. մանաւանդ զի ոչ միայն Զապելի՝ այլ յետ ամաց ինչ Պայլ եղեւ եւ փեսայացելոյն նմա՝ որդոյ իւրում Հեթմոյ, եւ 'ի տղայութեանն եւ յետոյ: Բայց սոյն ինքն Կոստանդին յետ թագաւորեցոյցանելոյ զՀեթում՝ 'ի բաժանել զիշխանութիւնն ընդ որդիս իւր, զչորրորդն՝ զՕշին՝ անուանեաց *Պայլ*, յայտ է թէ ոչ իբրեւ դաստիարակ եղբօրն, այլ իբրեւ հազարապետ տէրութեան, եւ ինքն կոչէր Թագաւորահայր եւ *Աւագ Պարոն*. եւ թէպէտ պաշտամունքն չէին ժառանգականք, այլ տեսանեմք զարմին Օշնի սեփականեալ զպայլութիւն՝ ցղար մի ողջոյն¹¹¹, հազարապետութեան տեսչութեամբ, եւ ոչ իբրու

¹¹⁰ Այսպէս իսկ կոչի յԱսսիզն Անտիոքայ, ըստ թարգմանութեան կամ բացատրութեան երկասիրողին, այսինքն է Սմբատայ գունդստապլի, (ԺԷ.). «Առ Պարոնն կամ իր երեսփոխանն՝ որ է Պայլն»:

¹¹¹ Պայլք յիշատակեալք 'ի պատմութեան.

1214-20 *Սիր Ատան*.

1219 *Կոստանդին Թագաւորահայր*.

1226 *Օշին որդի Կոստանդինի*.

1277 *Գրիգոր որդի Օշնի*.

1287-304 *Հեթում (Պատմիչ), եղբայր Գրիգորի*.

1304-7 *Հեթում Բ*.

1307 †29 *Օշին, որդի Հեթմոյ Պատմիչի*.

1331 *Վասիլ, Արքայահայր կոչեցեալ*.

1335 †7 *Պաղտին մարաջախտ*.